# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1025 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N 661-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 21-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 701-Լ, N 703-Լ և N 705-Լ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 661-Լ որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կառուցվածքում՝

1) Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչությունն անվանափոխել մասնագիտական կրթության և ուսուցման վարչության.

2) լրացուցիչ և շարունակական կրթության բաժինը միացնել մասնագիտական կրթության և ուսուցման վարչությանը.

3) գրահրատարակչության բաժինը միաձուլել ժամանակակից արվեստի վարչությանը՝ ստեղծելով ժամանակակից արվեստի և գրահրատարակչության վարչություն.

4) գնման գործընթացների և դրամաշնորհային մրցույթների կազմակերպման վարչությունն անվանափոխել գնումների կազմակերպման վարչության:

2. Որոշման հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 34.1-ին ենթակետով.

«34.1) իրականացնում է ազգային պահուստում հաշվեգրման ենթակա արժեքների հաշվառումը, պահպանությունը, վերականգնումը և կառավարության հանձնարարությամբ դրանց ցուցադրումը:».

2) 11-րդ կետի՝

ա. 15-րդ ենթակետում «նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, մասնագիտական» բառերը փոխարինել «արհեստագործական և միջին մասնագիտական» բառերով,

բ. 20-րդ ենթակետում «միջին և նախնական (արհեստագործական) մասնագիտական» բառերը փոխարինել «արհեստագործական և միջին մասնագիտական» բառերով.

3) հավելվածի 34-րդ կետի 2-րդ ենթակետում «նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչություն» բառերը փոխարինել «մասնագիտական կրթության և ուսուցման վարչություն» բառերով.

4) հավելվածի 34-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 24-րդ ենթակետով.

«24) ժամանակակից արվեստի և գրահրատարակչության վարչություն.».

5) հավելվածի 35-րդ կետի 11-րդ ենթակետում «գնման գործընթացների և դրամաշնորհային մրցույթների կազմակերպման վարչություն» բառերը փոխարինել «գնումների կազմակերպման վարչություն» բառերով.

6) ուժը կորցրած ճանաչել 34-րդ կետի 11-րդ, 22-րդ և 23-րդ ենթակետերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ